



ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ.

«Ցածր ածխածնային լուծումների ներդրում Գեղարքունիքի մարզի Ծովակ բնակավայրում՝ հողային և ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար»

Տեղեկատվական թերթիկը մշակվել է «Ցածր ածխածնային լուծումների ներդրում Գեղարքունիքի մարզի Ծովակ բնակավայրում՝ հողային և ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսավորմամբ: Սույն տեղեկատվական թերթիկում արտահայտված մտքերը պատկանում են «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱՉԾ տեսակետը:

Ծրագիրն իրականացվում է «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ կողմից՝ Հայաստանում ՄԱՉԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսավորմամբ:



www.blejanngo.org

ԲԼԵՋԱՆ



SGP

The GEF
Small Grants
Programme



ԿԱՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Գյուղատնտեսությունը բնական կոհամակարգերի շրջանակներում ծավալվող, ենսաբնական պրոցեսների վրա հիմնված և արդու կողմից վերահսկվող նպատակառոշված ռեսուսական գործունեություն է, որի նպատակը նակչությանը սննդով, իսկ արդյունաբերության հիշարկ շարք ուղղություններ՝ հումքով և կերերով պահովելն է:

Գյուղատնտեսությունը հսկայական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա և հանդիսանում է միայնի գլոբալ փոփոխության պատճառանդիսացող հիմնական գործոններից մեկը: Արեւնային համակարգը արտանետում է Երմոցային գագերի գլոբալ արտանետումների հոտ մեկ երրորդը, ինչպես նաև ուղղակիորեն պաստում՝ ջրի սակավության, քաղցրահամ երրի աղտոտման, հողի դեգրադացիայի, ռտառահատումների և մի շարք այլ ոմնախնդիրների առաջացմանն ու խորացմանը:

Կայուն գյուղատնտեսությունը տնտեսության արման բարելավված և անվտանգ մի այնպիսի ամակարգ է, որի դեպքում առավելագույնս օգտագործվում է բնական ռեսուրսների ներուժը, այց միաժամանակ ապահովվում է շրջակա շջավայրի անվտանգությունն ու Էկոհամակարգերի քրրիության հարատւությունը:

Սինքն՝ կայուն գյուղատնտեսությունը, տնտեսության վարման մի այնպիսի համակարգ է, որը կիրառում է Էկոլոգիապես անվտանգ այնպիսի գործելակերպեր, որոնք հնարավորություն են տալիս՝ նասել շրջակա միջավայրն ու մարդու ռողջությունը, հաշվի է առնում գործունեության ցիալ-տնտեսական արդյունավետությունն ու ամտաբերությունը, նպաստավոր պայմաններ են աւորվում գյուղական համայնքներում կյանքի

որակի բարելավման ու զարգացման համար: Կայուն գյուղատնտեսական գործելակերպերը ներառում են՝ պերմակուլտուրան, բույսերի խառը ցանքսը, մշակաբույսերի բազմազանեցումը, ցանքաշրջանառության կիրառությունը, ագրոանտառտնտեսությունների հիմնումը և այլն:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության կայուն բարձրացման, ջրային պաշարների և ոռոգելի հողատարածությունների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ջրման գործընթացի ճիշտ կազմակերպումը, որն իրականացվում է **ոռոգման արդյունավետ տեխնոլոգիաների** ներդրմամբ:

Ոռոգելի երկրագործության պրակտիկայում կիրառվում են ոռոգման ջրախնայող տարբեր տեխնոլոգիաներ (կաթիլային, անձրևացման, ստորգետնյա, ցայտաժապավենային և այլն), որոնցից աշխարհում առավել լայն տարածում է ստացել կաթիլային ոռոգումը: Այն հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատակարարման սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս.

- **հնայել ոռոգման ջրի զգալի քանակություն և միավոր բերքի վրա ծախսվող ջրի քանակը նվազեցնել 3-5 անգամ,**
- **Մեքենայացնել և ավտոմատացնել ջրման գործընթացը, նվազեցնելով ծախսվող ժամանակն ու ջանքերը,**
- **Բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը՝ 10-50%-ով,**
- **Ոռոգումը արդյունավետ կազմակերպել նույնիսկ բարդ ռելիեֆի և մեծ թեքությունների պայմաններում,**



- **Բարձրացնել մշակաբույսերի կողմից պարարտանյութերի յուրացման արդյունավետությունը՝ հասցնելով այն 80%-ի,**
- **Բացառել հողերի իռիգացիոն Էրոզիայի առաջացումը:**

Ճիշտ է ջրման այս եղանակը պահանջում է մեծ կապիտալ ներդրումներ, Էներգատար է, հատուկ պահանջ ունի ջրի որակի նկատմամբ և լրացուցիչ ծախսեր է պահանջում համակարգի պահպանման և արդյունավետ շահագործման համար, բայց այն նաև շատ արդյունավետ է և հնարավորինս կարճ ժամանակամիջոցում բերում է ծախսածածկման:

Հայաստանի պայմաններում, ոռոգման կաթիլային եղանակը, հանդիսանում է մշակաբույսերի ջրման առավել արդիական և հեռանկարային տարբերակ, որը թույլ կտա՝ խնայողաբար օգտագործել ոռոգման ջուրը, միավոր գյուղատնտեսական արտադրանքի հաշվով պակասեցնել ջրածախսը, բարձրացնել ոռոգելի հողատարածքների

